

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՏԱՐԵՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

07.10.2014

Հոկտեմբերի 7-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Ճամբարակ քաղաքում կատարեց քաղաքացիների ընդունելություն: Մարզպետին դիմած 40 քաղաքացիներից 35-ը խնդրեցին դրամական օգնություն: Բոլորի խնդրանքը բավարարվեց տեղում: Եվս 5 քաղաքացի մարզպետին դիմեցին տարաբնույթ հարցերով: Նրանց դիմումները վերցվեցին հաշվառման մարզպետարանի աշխատակազմում, որոնց պատասխանները կտրվեն օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում: